

ՊԱՐԱԿԵՐԵՆՈՒՄ ՎԿԱՅՎԱԾ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԱՌԿԱ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ*

ԶԱՐՈՒՀԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Ղարաբաղի բարբառ, ձիանուններ, պարսկերեն, իրանական ծագում, արաբերեն, փոխառություն, իմաստային փոփոխություն, բառապաշար, բառարան:

Ամփոփում

Յուրաքանչյուր լեզվի բառապաշարի հանգամանալից քննությունը ոչ միայն կարևոր է լեզվի պատմական զարգացման, փոխառությունների, բառերի դասակարգման, ձևաբանական ու իմաստային փոխհարաբերությունների տեսանկյունից, այլ նաև նպաստում է բառապաշարի նախկինում չնկատված կամ աննշան համարվող, իմաստային նոր խմբերի բացահայտմանը, վերաիմաստավորմանը, տարբեր լեզուներում նույն թեմատիկ դաշտերի համադրմանը և այս ամենով հանդերձ լեզվի հարստության չափմանը:

Ընտանի կենդանիների անվանումները պարսկերենի բառապաշարի ամենահին և ամենակայուն շերտերից են: Դրանք իրանական լեզուների հիմնական բառաֆոնդի կարևոր մասն են կազմում: Պարսկերենի բառապաշարի ուսումնասիրությունն ակնհերձ է դարձնում, որ լեզվի մեջ ընտանի կենդանիների բազմաթիվ անվանումներում առանցքային տեղ են գրավում «ձի» և «ուղտ» նշանակող բառերը¹:

Ձիանունների իմաստային դաշտը պարսկերենում յուրահատուկ մի համակարգ է, որում արտացոլված են ժողովրդի լեզվամտածողությունը, պատմամշակութային, տնտեսական գործընթացները և այլն: Պարսկերենի բառապաշարում բազմաթիվ ձիանունների առկայությունը պայմանավորված է նաև նրանով, որ ձին իրանական ժողովուրդների շրջանում դարեր շարունակ պաշտամունքային և գործառական նշանակություն ունեցող հատուկ կենդանի է համարվել:

* Ներկայացվել է 21. IX. 2025 թ., գրախոսվել է 25. IX. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

¹ Պարսկերենի բառապաշարում ընտանի կենդանիների անվանումների մեջ ձիանունների ընդհանուր թիվը հասնում է մոտավորապես 550-ի (կազմում է պարսկերենում ընտանի կենդանիների անվանումների շուրջ 36 %-ը), իսկ ուղտի անվանումները՝ մոտ 700-ի (շուրջ 41 %): Հարկ է նշել, որ երկուսն անձնական հետաքրքրությունից՝ ձիանուններին զուգահեռ ուսումնասիրվել է նաև ուղտի անվանումների թեմատիկ դաշտը
ج. ١٤ ، ١٣٧٢/١٩٩٣-١٩٩٤ . دهخدا պարսկերենում, որի քննությունը համար տե՛ս

Հայերենում և նրա բարբառներում նկատելի չերտ են կազմում այն ձիանունները, որոնք վկայված են նաև պարսկերենում (իրանական, արաբական և թյուրքական ծագման բառամիավորներ)²: Կան ձիանուններ, որոնք չեն հանդիպում պարսկերենում, սակայն այդ բառերի արմատը ստուգաբանորեն հանգում է իրանականին:

Մեզանում ձիանունների այս ամբողջ հատվածը գոյացել է թե՛ գրաբարյան բառամիավորներից, թե՛ նոր պարսկերենից՝ ուղղակի կամ վերջինիս միջոցով փոխառված արաբական ու թյուրքական ծագման բառերից: Այս վերջին դեպքում շատ դժվար է, իսկ հաճախ՝ անհնարին որոշարկել, թե արդյոք բառը հայերենին է անցել հենց պարսկերենի միջնորդությամբ, թե՛ ուղղակի՝ փոխառու լեզվից: Ասվածը հատկապես վերաբերում է թյուրքական ծագման ձիանուններին:

Նախաբան

Ղարաբաղի բարբառը հայ ամենամեծ ու տարածված բարբառներից մեկն է: Ինչպես նշում է Լ. Հովհաննիսյանը. «Մի շարք հանգամանքների բերումով հայ բարբառները զգալի ազդեցություն են կրել իրանական լեզուներից: Իրանական տարրը ավելի առատ է արևելյան բարբառներում, քանի որ այլ հանգամանքներից զատ, այստեղ առարկայանում է նաև սահմանակցային գործոնը: Ղարաբաղի բարբառում կարելի է առանձնացնել բազմաթիվ պարսկերեն բառեր, որոնք գործածական ու հաճախական են. արուռ «պատրվ», գուլ «վարդ», թախտ, թաղբանդ «կամարակապ շինություն», թէշտ «տաշտ», խուրդ ա՛ «մանր», խորագ «ճաշ» և այլն ...»³: Նույնն է վկայում նաև Գ. Մելիքյանը. «... բարբառում վկայված են նաև զգալի թվով պարսկական փոխառություններ, որոնց առկայությունը շատ բնական պետք է համարել, եթե հաշվի առնելու լինենք, որ Արցախն երկրամասը ոչ միայն աշխարհագրական առումով անմիջականորեն հարևան է Իրանի հյուսիսային շրջանների հետ, այլ նաև ապահովելով հայկական պետական ավանդույթի տեականությունն ու շարունակականությունը, հատկապես մեղիքությունների շրջանում ունեցել է բավականին ինտենսիվ շփումներ նաև պարսկերենը որպես պաշտոնական գրազրույթյան լեզու գործածվող իրանական պետական և վարչական կառույցների հետ»⁴:

Ղարաբաղի բարբառի քննությունը թույլ է տալիս ներկայացնելու հետաքրքիր ու յուրօրինակ մի բառաշար՝ ձիանուններ, որոնք վկայված են պարսկերենում: Պարսկերենում և հայերենում վկայված բոլոր ձիանունների, դրանց ենթաիմաստային խմբերի հանգամանալի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է մոտավորապես մեկ տասնյակից ավելի առկայություն Ղարաբաղի բարբառում՝ անթափ/աբառ, ախտա, այդը/այդըր, եդակ, թաղի/թաղի, իլխա/իլխի/իլի, խաթար, յաբու, յորդա/յորդա, յավաշ, ոաշ:

Պարսկերենի և հայերենի բառարանների, բարբառային նյութի հիման վրա փորձել ենք ավելի ընդգրկուն ներկայացնել այդ թեմատիկ խումբը՝ ուշադրություն դարձնելով բառիմաստների, գործածական յուրահատկությունների և այլ երևույթների վրա: Անդրադարձել ենք Ղարաբաղի բարբառում վկայված «ձի»

² Խ ա չ ա տ ր յ ա ն. 2021, 90–123:

³ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1990, 65:

⁴ Մ ե լ ի ք յ ա ն. 2016, 236:

նշանակությունը այն բառամիավորների ուսումնասիրությանը, որոնք հանդիպում են պարսկերենում, տվել դրանց հնարավորինս ամբողջական պատկերը, իմաստային տեղադրությունը, կիրառման հաճախականությունը:

Թեմայի ուսումնասիրության և աշխատանքի հետազոտության լեզվական հիմնական նյութի դուրսգրման, հավաքման գործում առաջնային են եղել պարսկերեն⁵, իրանական և թյուրքական մի շարք լեզուների, արաբերեն ու հայերեն բառարանագրական աղբյուրները, Յոզեֆ Կարստի «Միջին հայերենի գիտական բառարանի» ձեռագիրը Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվից⁶, գրական գրավոր հուշարձանները և ձևամատյանները:

ԱՒՌԱՆԵ/ԱԲՐԱՇ⁷

Ղարաբաղի բարբառի բառարանում անբաց լրացված է հետևյալ իմաստներով. «1. Կոպիտ, տգեղ, ալլանդակ: Էս տղան սաղ աշխարհը չօւ ա կամ, վերջը մին անբաց փաշիգ՝ օղում: Բառը նույն իմաստով գործածական է նաև Հավարիկի և Բասենի բարբառներում: 2. Չարքաշ, շատ աշխատող: Ըտրան մին անբաց մարթ ա ինում ...»⁸:

«Հայոց լեզվի բարբառային բառարանը» տալիս է նաև արևաշ/արբաշ տարբերակները Բասենի և Համշենի բարբառներում՝ «ալլանդակ, տգեղ» նշանակությամբ և Ղարաբաղի բարբառում 2-րդ իմաստով արևաշ՝ «լծկանին (գտմեշ, եզ) տրվող անուն»⁹: Եզրը բարբառում հանդիպում է հեզնական նշանակությամբ դարձվածքի և բառակապակցության մեջ՝ ըբաշին քարը՝ «անգուլթ, անխիղճ, անտարբեր»¹⁰:

Միջին հայերենում վկայված է ապրաղ բառը՝ «սև ու սպիտակ պոտեր ունեցող, խայտախարիվ»¹¹ իմաստով: Այն Յ. Կարստի միջին հայերենի բառարանում արձանագրված է ապրաշ ձևով՝ «պիսակ», ապրաշներ՝ «պիսակներ»¹²: Կարստը բերում է նաև բառի թուրքերեն տարբերակը՝ abraş: Քննվող եզրը առկա է թուրքերենում՝ abraş. «1. Բծավոր, պիսակավոր (ձիու մասին), 2. Անգույն, գունատ (օր.՝ դեմքի, տերևների համար), 3. Բորոտ (խակց. թուրքերենում)» իմաստներով¹³:

Պարսկերենում abraş (ابرش) բառը արաբերենից փոխառյալ բազմանշանակ ձիանուն է, որի բոլոր իմաստներում գերակշռող տարրն է «ճանճ-

⁵ Պարսկերեն բառարանագրության սկիզբը համարվում է X դարը, սակայն, համաձայն որոշ տեղեկությունների, այն սկզբնավորվել է ավելի վաղ շրջանում. տե՛ս Барышников. 1982, 218.

⁶ Կարստ. Մատենադարան, ց. № 62, թղթ. 249, վավ. 4:

⁷ Հոգվածում ա, ու, օ ձայնավորների քմային տարբերակները ներկայացված են հետևյալ տեսքով՝ ան, ու, օ:

⁸ Սարգսյան. 2013, 27:

⁹ Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, հ. Ա, 2:

¹⁰ Սարգսյան. 2013, 27:

¹¹ Ղազարյան, Ավետիսյան. 2009, 72:

¹² Կարստ. ց. № 62, թղթ. 249, վավ. 4:

¹³ Баскаков и другие. 1977, 20.

կենը, պիսակավորը»։ «1. Սպիտակ պուտերով կարմիր ձի, 2. Շատ մանր պուտերով ձի, 3. Մաշկի գույնին հակառակ խառը գույներով պտավոր ձի, 4. Դեղնակարմրավուն պիսակներով աշխետածի, 5. Կարմիր, սև ու սպիտակ մագերով ձի, 6. Ծանծկեն, պիսակավոր նժույգ»¹⁴։ Եզրը ծագում է արաբ. brš «պտավոր լինելը» արմատից¹⁵։ Բառը պարսկերենում հաճախադեպ է։ Այն հիշատակվում է Օմար Խայամի «Nowruzname» (X դ.)¹⁶ և Օնսոր ալ-Մաալի Քեյ Քավուսի «Qābusnāme» (XI դ.)¹⁷ ստեղծագործություններում։ Միջնադարյան «Do farasnāme. Mansur o manzum» (1171 թ.) ձիուն անվանում են նաև fa'ufi, երբ «ձիու դեղնակարմրավուն երանգը հարում է սևին»¹⁸։ Բառամիավորը ձիանվան նույն նշանակությամբ վկայված է նաև պարսից լեզվի միջնադարյան Միր Զամալ ալ-Դին Հասան Էնջու Շիրազիի «Farhang-e Jahāngiri»¹⁹ (1595–1608 թթ.) և Մոհամմադ Հոսեյն Խալաֆ-ե Թաբրիզիի «Borhān-e Qāte'»²⁰ (1651 թ.) հայտնի բառարանագրական աղբյուրներում²¹, իսկ ավելի ուշ չրջանի՝ Սեյյեդ Մոհամմադ Ալիի (Դա'ալ-Էսլամ) «Farhang-e Nezām» (1878 թ.) բառարանում բառն արձանագրված է մեկ իմաստով. «Մաշկի գույնին

14 دهخدا. ۱۹۹۴-۱۹۹۳/۱۳۷۲، ج. ۱، ۲۴۱؛ معین. ۱۳۵۶/۱۹۷۷، ج. ۱، ۱۲۲؛ عمید. ۱۳۵۸/۱۹۷۹، ۱۲۱.

15 Արաբական ծագման ձիանունների բառարմատի քննության համար հիմք են ծառայել հետևյալ արաբերեն բառարանները՝ منظور، مکرم این محمد بن ۱۹۸۸؛ Баранов. 1989.

16 Օմար Խայամի «Nowruzname» ստեղծագործության «Yād kardan-e asp va honar-e u va ān če vājeb āyad» գլուխը ամբողջովին ձիու, նրա դերի և նշանակության մասին է։ Հեղինակը «Nāmā-ye aspān be zabān-e pārsi» վերնագրով առանձին բաժնում անդրադառնում է պարսից լեզվում վկայված ձիանուններին՝ հիշատակելով մոտ հինգ տասնյակի հասնող ձիու անվանումներ՝ ābgun, ablaq, aryun, bādxeng, behgun, bahārgun, bursār, banafšegun, tāzičarme, čarme, čašine, xeng, dize, zardraxš, zāqčāsm, sorxčarme, magasxeng, sabzxeng, samand, siyāhraxš, šabdiz, kommeyt, meygūn, nilgūn և այլն։ Գրքում հանգամանալից ներկայացվում են յուրաքանչյուր ձիու հատկությունները, գույնի, գունային նրբերանգների նկարագրությունը, ինչպես նաև ձիու բարեբեր կամ չարաբեր լինելը։ Հիշատակվում են նաև որոշ ձիանունների արաբերեն հոմանիշները պարսկերենում։ Այս երկը ձիանունների ուսումնասիրության ժամանակ մեզ հանդիպած առաջին հնագույն ստեղծագործությունն է, որտեղ մեկտեղված են պարսկերենում վկայված բազմաթիվ ձիանուններ։ Ստեղծագործության ձեռագիրը գտնվում է Բեռլինի ազգային գրադարանում. տե՛ս خيām. ۱۳۱۲/۱۹۳۳، ۵۴-۵۱.

17 کیکاووس. ۱۳۳۵/۱۹۵۶، ۱۰۷.

18 دو فرسنامه، منثور و منظوم. ۱۳۶۶/۱۹۸۷، ۱۹.

19 اینجو شیرازی. ۱۳۵۱/۱۹۷۲، ج. ۱، ۶۲۷.

20 خلف تبریزی. ۱۳۷۶/۱۹۹۷، ج. ۱، ۷۹.

21 Հնդկաստանում տպագրված Մոհամմադ Հոսեյն Խալաֆ-ե Թաբրիզիի միջնադարյան խոշոր հուշարձանի հնգհատորյակում (չուրջ 19417 բառամիավոր, դարձվածքներ և կայուն բառակապակցություններ) գետեղված է պարսկերենի ընտանի կենդանիների, մասնավորապես իրանական ծագման նկարագրական ձիանունների, բավականին սովոր հասովածը։

Հակառակ խառը գույներով պտավոր ձի»²²: Abraš եզրը պարսկերենում կազմում է նաև burabraš բարդ բառը (bur- < հիբ. *baura- նախաձևից՝ «մուգ շագանակագույն, փայլուն դեղնակարմիր», «սպիտակ պուտերով հրակարմիր ձի»²³: Abraš, burabraš և siyāhabraš եզրերը միջնադարյան պարսկերեն ձիու բժշկարանում հիշատակվում են որպես «մանր պուտերով սև, կարմիր կամ սպիտակ ձի»²⁴: Նույն արմատին է հանգում նաև bariš (بريش) «1. Երկգույն ձի, 2. Մաշկի հիմնական գույնին հակառակ գույնի պտավոր ձի» բառամիավորը, ինչպես նաև ebrešāš «ձիու պտավոր դառնալ» անորոշ դերբայը²⁵: Քննվող արաբական փոխառությունը հանդիպում է նաև իրանական լեզուներից քրդերենում՝ ebreš «պուտերով ձի» և մազանդարաներենում՝ abreš «1. Երկգույն կենդանի, 2. Պտավոր» իմաստներով²⁶:

Ձիանվան գործածությունը հանդիպում է նաև պարսից դասական գրականության մեջ: Այն հիշատակվում է Ֆիրդուսի «Շահնամե» ստեղծագործությունից (4 անգամ)²⁷. «... Az ān abraš o xeng o bur o siyāh, ke didast šāhi ze āhan-e siyāh ...»²⁸ («... Եվ այն կարմրապուտ, սպիտակափայլ, շառատագույն ու սև նժույգներին, արքայի հետ երկաթե զրահ հագցրին ...»): Բառամիավորից է կազմված նաև burabraš «սպիտակ պուտերով հրակարմիր ձի» բարդությունը, որը դարձյալ հիշատակվում է Ֆիրդուսին. «... Yeki burabraš be pišeš be pāy, na ārām dārad to guyi be jāy ...»²⁹ («... Նրա մոտ բերեցին շիկակարմիր մի նժույգ, որ ո՛չ հանգիստ ունի և ո՛չ էլ դադար ...»): Abraš բառը «Շահնամեում» կիրառվում է նաև «գույնզգույն» փոխաբերական իմաստով³⁰, որը չի հանդիպում պարսից գրականության այլ հեղինակների մոտ (թերևս մեր ուսումնասիրությունների չըջանակներում): Քննվող եզրը ձիանվան իմաստով հանդիպում է նաև Խաղանի Շիրվանիի ստեղծագործության մեջ. «... Atlas be rang-e ātaš va asl-e 'amāme azani, abraš čo bād-e neysān, tondi besān-e tondar ...»³¹ («... Բոցագույն ձի պուտավոր՝ քանց քամի և ամպրոպ ապրիլ ամսի ...»):

Ա.ԽՏԱ.

Ղարաբաղի բարբառում ախտա³² բառը նշանակում է «կորիզները հանած հոնի կամ սալորի չիր». հմմտ. պարսկերենում zoγāl āxte «հոն»: Առանց հոն-ն ու ախտա հավ չըն մաշիլ: Բարբառում հանդիպում է նաև ախտա անել «հոնը կամ սալորը կորիզներից անջատել և չորացնել» հարադիր բայը: Էնքան ախտա

²² داعی الاسلام. ۱۳۶۲/۱۹۸۳. ج. ۱، ۶۵.

²³ حسن دوست. ۱۳۹۳/۲۰۱۴. ج. ۱، ۵۲۷.

²⁴ دو فرسنامه، منتور و منظوم. ۱۳۶۶/۱۹۸۷. ۲۲.

²⁵ دهخدا. ۱۳۷۲/۱۹۹۳-۱۹۹۴. ج. ۱، ۲۴۱.

²⁶ فرهنگ لغات زبان مازندرانی. <https://www.tabarestan.ir> (գիտվել է՝ 22. VII. 2018 թ.)

²⁷ Wolff. 1935, 48.

²⁸ فردوسی. ۱۳۶۱/۱۹۸۲. ج. ۳-۴، ۱۶۱۰/۳۶۰.

²⁹ فردوسی. ۱۳۶۱/۱۹۸۲. ج. ۱-۲، ۹۰۱/۱۲۹۵.

³⁰ فردوسی. ۱۳۶۱/۱۹۸۲. ج. ۳-۴، ۱۱۶۷/۱۱۸۰.

³¹ خقانی شروانی. ۱۳۱۶/۱۹۳۷. ۱۹۵.

³² Սարգսյան. 2013, 35:

յա ըրալ, տընդ չօնէ, թա ածէ: Բառը հանդես է գալիս նաև որպես դարձվածքային միավոր՝ փստա խան «ամորձատված տղամարդ, որ հիմնականում ծառայում էր կանանոցում՝ ներքինի»³³: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» փստա բառի «ներքինացված, ամորձատված» իմաստն արձանագրում է Արարատյան և Ղարաբաղի բարբառային միավորներում «ախտաձի», երկրորդ՝ «զտած գինի» իմաստը վկայվում է Հավարիկի բարբառում³⁴, իսկ երրորդ իմաստը Մոկսի և Շատախի բարբառներում փստափանա բառը՝ «ձիանոց, ձիերի փստո» նշանակությամբ: Վերջինս հանդիպում է նաև իրանական լեզուներից մունջաներենում՝ axta-xâna՝ «զոմ, փստո»³⁵:

Բառամիավորը պարսկերենում բնիկ իրանական եզրույթ է. āxte/axte (اخته/اخته) «ամորձատ ձի կամ կենդանի»: Բառի արմատը ծագում է հիթ. *θanj- «ձգել, քաշել» նախաձևից³⁶. Հմմտ. նպր. axte «կրտած, մալած», axteči, նաև axtebig «այն անձնավորությունը, որը կատարում է այդ գործողությունը»³⁷: Զիանունը հանդիպում է նաև իրանական լեզուներից քրդերենում՝ exte³⁸, Մհրթ. քրդ. yaxta³⁹, Ամր. բրբռ. axda, փշթ. axta-ās: Վրացերենում ax'ta «մտրուկ» բառը նույնպես հանգում է իրանական արմատին⁴⁰:

Եզրը վկայված է հին թուրքերենում āqta > *aqt > at: Բառը axta at, aṣta/акта «կրտած ձի» տարբերակներով տարածված է թուրքական բոլոր լեզուներում և հիշատակվում է XIV դարից հետո ստեղծված հուշարձաններում⁴¹:

ԱՅՂԸՈՒ/ԱՅՂԸՐ

Ղարաբաղի բարբառում քննվող բառը այղը/այղը⁴² տարբերակներով նշանակում է «1. Չամորձատած, բարձրակարգ ձի, որձ ձի, հովատակ, 2. փխբ. կնամող տղամարդ, 3. Տգեղ կին»: Էտ այղըը հինչ ափ, վեր օզալ ըս: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» Արարատյան և Կարինի բարբառներում բառն արձանագրում է այղը ձևով և այղը՝ Ղարաբաղի բարբառում՝ «չամորձատած բարձրակարգ ձի, հովատակ» իմաստով: Մի հրեղեն այղը ձի դուրս եկավ ջրի միջիցը⁴³: Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ բառը որոշ խոսվածքներում ունի էյղը ձևը⁴⁴: Այղը բառին Ս. Մալխասյանցը տալիս է «արու, չկրտած ձի,

³³ Ս ա Ր Գ ս յ ա ն, Մ ի ն ա ս յ ա ն. 2017, 67:

³⁴ Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, հ. Ա, 21:

³⁵ حسن دوست. ۱۳۹۳/۲۰۱۴. ج. ۱۰۹، ۲.

³⁶ حسن دوست. ۱۳۹۳/۲۰۱۴. ج. ۱۰۸، ۲.

³⁷ خلف تبریزی. ۱۳۷۶/۱۹۹۷. ج. ۱، ۱۱۷؛ دهخدا. ۱۳۷۲/۱۹۹۳-۱۹۹۴. ج. ۱، ۴۰؛ معین.

³⁸ ۱۳۵۶/۱۹۷۷. ج. ۱، ۱۶۹؛ عمید. ۱۳۵۸/۱۹۷۹. ج. ۱، ۸۴.

³⁹ کریم عارف ج. ۲۰۰۶، ۴۰.

⁴⁰ کلباسی. ۱۳۲، ۱۳۸۶/۲۰۰۷.

⁴¹ Morgenstierne. 1938, 195.

⁴² Щербак. 1961, 158; Севортян. 1974, 77.

⁴³ Ս ա Ր Գ ս յ ա ն. 2013, 43:

⁴⁴ Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, հ. Ա, 53:

⁴⁵ Լ. Հովհաննիսյանը հաղորդել է մասնավոր զրույցներից մեկի ժամանակ:

մատակախազ» նշանակությունը⁴⁵ այն համարելով փոխառություն տաճկերենից⁴⁶: Բառի «որձ ձի հովատակ» իմաստով գործածությունը վկայված է «Արդի հայերենի բացատրական բառարանում»՝ գվռ. նշումով⁴⁷:

Բառը համաթյուրքական է, ժամանակակից թյուրքական լեզուներում՝ ալթ., բաշկ., ղազ., թուրքմ., գազ., իսկս. և այլն, ունի «հովատակ» իմաստը, սակայն նախնական նշանակությունը եղել է «ցանկացած կենդանու արուն»⁴⁸: Բառն առկա է օսմաներենում՝ آيغر «մատակախազ ձի»⁴⁹: Այն թուրքերենում ունի նաև «մեկ հովատակին պատկանող ձիերի երամակ» նշանակությունը⁵⁰:

Айгор/ауғор եզրը ժամանակակից պարսկերենում, նաև e(a)ygar տարբերակներով⁵¹, լրացնում է լեզվի թյուրքական փոխառությունների շարքը. «1. Հովատակ, 2. Բեղմնավորման համար պահվող ձի, 3. Ազնվացեղ զտարյուն նժույգ, 4. Արագավազ նժույգ»⁵²:

ԵԴԱԿ

«Հայերենի բարբառային բառարանը» եղակ⁵³ բառը Ղարաբաղի բարբառում արձանագրում է հետևյալ իմաստներով. «1. Ձի, որին հեծյալը երասանից բռնած տանում է, որպեսզի հարկ եղած դեպքում փոխարինի հիմնական ձիուն, 2. Ուրիշ ձիու ետևից հոժարությամբ գնացող ձի»: Նույն իմաստներով բառը հանդիպում է նաև Գանձակի բարբառում: Քեսաբի և Հավարիկի բարբառներում բառը նշված նշանակությամբ օգտագործվում է իդակ ձևով: Եզրը Մուշի և Բաղեշի բարբառներում գործածական է «ավելորդություն» փոխաբերական նշանակությամբ:

Հ. Աճառյանը յետեկ բառամիավորի մասին գրում է. «ձի եկեալ յետուստ. այսինքն ձի ասպատանիկ, զոր ի յետուստ տանին ճանապարհորդք ի պէտս իւրեանց և իշխանաւորք առ ի զարդ»՝ բերելով բառամիավորի վկայությունը «Բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում՝ համարելով թրք. yedek ձիանվան հոմանիշը⁵⁴:

Ս. Մալխասյանը «Հայերէն բացատրական բառարանում» եղակ բառն արձանագրում է «ձի, որի վրայ չեն հեծնում, այլ իրանց յետևից քաշում են պախուրցով. ընդհանրապէս ձի, որ յօժարութեամբ գնում է ուրիշ ձիու յետևից» նշանակությամբ⁵⁵: Գ. Ջահուկյանը եզրին տալիս է «պահեստի ձի» իմաստը⁵⁶:

Բառամիավորը թուրքերենում ունի yedek (-ği) «պահեստային», yedek at

⁴⁵ Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1944, I, 80:

⁴⁶ Ա բ ի կ ե ա ն. 1892, 94:

⁴⁷ Ա դ ա յ ա ն. 1976, 42:

⁴⁸ Щербак. 1961, 87; Севортян. 1974, 108.

⁴⁹ Ա բ ի կ ե ա ն. 1892, 93:

⁵⁰ Радлов. 1905, I, 15–16.

⁵¹ عميد. ۱۱۵، ۱۳۵۸/۱۹۷۹.

⁵² دهخدا. ۱۳۷۲/۱۹۹۳-۱۹۹۴، ج. ۱، ۲۰۴.

⁵³ Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, հ. Ա, 363:

⁵⁴ Ա ճ ա ո յ ա ն. 1977, հ. Գ, 397:

⁵⁵ Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1944, III, 407:

⁵⁶ Ջ ա հ ու կ յ ա ն. 2010, 552:

(beygir) «օգնական, ձեռքի տակ եղած ձի»⁵⁷, օսմ. «նժույգ»⁵⁸, տաճ. «նժույգ, երկրորդական»⁵⁹ իմաստները:

Պարսկերենում yadak (يادک) բառը լրացնում է թյուրքական փոխառությունների շարքը՝ «1. Պահեստի ձի, 2. Առանց հեծյալի թամբած ձի, որը գնում է արքաների ու իշխանների ձիերին համընթաց, 3. Ձի, որին պահում են՝ արքաներին ընդառաջ գնալու համար, 4. Ձի, որին պահում են՝ հիմնական ձիուն համընթաց գնալու համար»⁶⁰: Բառը բազմահոմանիչ է պարսկերենում bālā/bālād/bālāda(-e)/bālāz/pālād/pālāda(-e)/bālāy/pālāy, janib, janibat, rekābi, kotal, kutāl, kutal, navbati/noubati: Պարսկերենում նույն բառից է բառաբարդված նաև yadakkeš եզրը՝ կազմված yadak և kešidan «քաշել» բայի keš - ներկայի հիմքից, այսինքն՝ «պահեստի ձի քաշող»:

ԹԱՂԻ/ԹԱԶԻ

Ղարաբաղի բարբառում թաղի/թազի⁶¹ (նաև թաղը) բառն ունի հետևյալ իմաստները. «1. Բարձրասրուն արագավազ որսի շուն: Մարթը միկա քլնում ա, տեսնում մին օվչի, թո՛ւվանգը ծէրքէն, թաղին հէտան, կիւմ ա: 2. փխբ. Փոքր ու նիհար շուն: Կո՛ւլը վէր ուռնամ ա, էտ թաղին պո՛ւնո՛ւմը կօջ ա կիւմ: 3. Շատ նիհար մարդ: Էտ թաղին հինջ բի՛ղի փուկ ըշխաղէ, վէր կարէ տօնը պահէ: Բառն արձանագրված է Արարատյան, Հավարիկի (նաև՝ տաճր), Նոր Նախիջևանի, Սեբաստիայի, Խոտուշուրի, Մուշի, Վանի բարբառներում թաղը, իսկ Շատախի բարբառում՝ տաճը տարբերակով: «Ղարաբաղի բարբառի բառարանում» վկայված են հետևյալ հարադիր բայերը. թաղի տը՛նուալ, կըտըրէլ «1. Հնազանդ դառնալ, խեղճանալ, 2. Նիհարել» (Հմմտ. Թրք. tazilamak «սաստիկ նիհարել, հյուժվել, չորանալ»)»⁶², թաղի չի՛նիլ «1. Հնազանդեցնել, խեղճացնել, 2. Նիհարեցնել»: Եզրը հանդիպում է նաև դարձվածքի մեջ. «Թաղին քըս տալալ ըլըբաստըրալ չի փըռնէլ», այսինքն՝ անիմաստ է մեկից իր ուժերին անհամապատասխան բան պահանջելը: Թաղին քըս տալալ ըլըբաստըրալ չի փըռնէլ, էտ տըղան դօխտուր տը՛նուօղը չի, նըհափ չըրչարվը մէլ»⁶³:

Եզրը Գորիսի բարբառում վիրավորական իմաստով կիրառվում է՝ «թաղի շուն»⁶⁴ արտահայտությունում:

Քննվող բառը Հավարիկի բարբառում ունի «արաբական նժույգ» իմաստը⁶⁵:

⁵⁷ Баскакови другие. 1977, 919.

⁵⁸ Կարապետյան. 1912, 945:

⁵⁹ Աբիկյան. 1892, 644:

⁶⁰ دهخدا. ۱۳۷۲/۱۹۹۳-۱۹۹۴ ج. ۲۱۰۱۲، ۱۴، معین. ۱۳۵۶/۱۹۷۷ ج. ۵۲۵۳، ۴.

⁶¹ Սարգսյան. 2013, 183:

⁶² Баскакови другие. 1977, 836.

⁶³ Սարգսյան, Մինասյան. 2017, 167:

⁶⁴ «Թաղի շուն» վիրավորական արտահայտությունը լսել եմ պապիկիցս՝ Վաղարշակ Մուսայելյանից (Գորիս, գյուղ Խնածախ): Կա նաև «թաղի թուլա» դարձվածքը. «1. Ամեն ստոր ծագում ունեցող մեկը, 2. Նվաստ, թշվառական և այլն» (դարձվածքը մասնավոր զրուցյներից մեկի ժամանակ հաղորդել է Մարո Քարամյանը (Գորիս, Տեղ գյուղ, հայոց լեզվի ուսուցչուհի):

⁶⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան. 2002, հ. Բ, 59:

Tāzi (تازی) եզրը պարսկերենում իրանական ծագման բառ է. «1. Արաբական արագավազ ձի, 2. Հայտնի ազնվացեղ ձի, 3. Թուրքական ձիուց ավելի նիհար ձի, 4. Որսի շան մի տեսակ, բարակ»⁶⁶: Բառը կարող է ունենալ հետևյալ բացատրությունները՝ առաջին. հանգում է պհլվ. tāzhîk, մպրս. tāčîk, ժպրս. tāzi «արաբ, արաբական» ձևերին, որը ծագում է *tāy-čik- նախաձևից (արաբ. طي) tai ցեղանունից čik վերջածանցի կցմամբ), այսինքն՝ «արաբական, դրան պատկանող». Հմմտ. հյ. «տաճիկ»⁶⁷, երկրորդ բացատրությունը կապված է ժամանակակից պարսկերենի tāzi/tāzande «վազող, ասպատակող» բառաձևի հետ (tāxtan «վազել, ասպատակել» tāz- ներկայի հիմքով, որը հանգում է հիր. *tāk-՝ «վազք, վազել, ասպատակել» արմատին)⁶⁸: Եվ քանի որ արաբական ձիերին բնորոշ էին արագավազությունն ու դիմացկունությունը, բառամիավորը, ամենայն հավանականությամբ, կարող է նշանակել «արագավազ, սրարշավ ձի»: Պարսկերենում նույն իմաստն են արտահայտում նաև tāzyāni⁶⁹, tizi⁷⁰ բառաձևերը: Պարսկերենում առկա են նաև tāzičarme(-a) «ոչխարի բրդի նման մազերով ձի»⁷¹, ինչպես նաև asbtāz, asbtāzande «ձի վազեցնող» և asbtāz «հարթ ու ողորկ գետին՝ ձի վազեցնելու համար» բառաբարդված ձևերը⁷²:

Քննության առնված բառը Ղարաբաղի բարբառում վկայված է միայն «որսորդական շուն» իմաստով:

Գրաբարում է վկայված տաճիկ եզրը, որը որոշիչ է համարվել «արագընթաց, արագավազ ձիու և ուղտի» համար⁷³: Բառը հանդիպում է նաև «Գրաբարի բացատրական բառարանում»⁷⁴: Հ. Աճառյանն արձանագրում է բառի վկայությունները Բուզանդի և Սեբեոսի մոտ. «... բայց միայն Մերուժանն ՚ի տաճիկ ձի նստեալ փախչէր ...», «... ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ՚ի քաւղէիցն, տաճիկ ուղտուք արձակէ ՚ի Հայս արս զհողոյ և զջրոյ ...», «... վաղիւ առաւաւտուն ցուցանեմ ձեզ փիղս վառս եւ երիվարս տաճիկս եւ երագունս ...»⁷⁵: Գրաբարում նույն արմատից է նաև թագել⁷⁶ բայը՝ «վազել, արշավել» իմաստով, որի մեկնությունը «Հայերեն արմատական բառարանը» հղում է «Նոր Հայկազյան բառարանին»:

XI դարի պատմիչ Ստեփանոս Ասողիկը ևս հիշատակում է բառը. «Իսկ

⁶⁶ Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գէորգեայ դպրէ Տէր Թովհաննէսեան Պալատցոյ. 1826, 106; 1. ج. ۱۳۷۶/۱۹۹۷, ۵۴۹; دهخدا. ۱۹۹۴-۱۳۷۲, ۵۴۵; ج. ۴, ۵۴۷۷; معین. ۱۳۵۶/۱۹۷۷, ۲. ج. ۱۰۰۷.

⁶⁷ Հյ ու բ շ մ ա ն. 2003, 86:

⁶⁸ حسن دوست. ۱۳۹۳/۲۰۱۴, ج. ۸۸۳, ۲.

⁶⁹ خلف تبریزی. ۱۳۷۶/۱۹۹۷, ج. ۱, ۵۴۹; دهخدا. ۱۹۹۴-۱۳۷۲/۱۹۹۳, ج. ۴, ۵۴۸۰.

⁷⁰ خلف تبریزی. ۱۳۷۶/۱۹۹۷, ج. ۱, ۵۴۵; داعی الاسلام. ۱۳۶۲/۱۹۸۳, ج. ۲, ۱۸۴; دهخدا. ۱۹۹۴-۱۳۷۲/۱۹۹۳, ج. ۵, ۶۳۷۶.

⁷¹ ختام. ۱۳۱۲/۱۹۳۳, ۱۱۴.

⁷² دهخدا. ۱۳۷۲/۱۹۹۳-۱۹۹۴, ج. ۲, ۱۷۲۸; داعی الاسلام. ۱۳۶۲/۱۹۸۳, ج. ۱, ۲۰۳.

⁷³ Ղ ա զ ա ր ե ա ն. 2000, II, 538:

⁷⁴ Խ ա չ ա տ ր յ ա ն. 2003, 343:

⁷⁵ Ա ճ ա ո յ ա ն. 1979, հ. Դ, 365–366:

⁷⁶ Ղ ա զ ա ր ե ա ն. 2000, I, 475:

Սմբատ ձիս տաճիկս և զուռնչս դիականցն առաքէ առ կայսրն Յունաց»⁷⁷: Այդ ժամանակ, հավանաբար, այնքան բարձր է գնահատվել արաբական ձին, որ Սմբատ Բագրատունին հարկ է համարել ընծայել Բյուզանդիայի կայսրին:

Զիռլ արտաքին առանձնահատկությունների և ազնվացեղ լինելու մասին է վկայում նաև «Գիրք վաստակոցը» (XII–XIII դդ.) «... և զխասն տաճիկ ձիոցն սահմանն»⁷⁸:

Քննվող բառը միջին հայերենում ունի «մահմեդական, արաբական և արաբերեն» իմաստները⁷⁹:

Եզրը հայերենում փոխառություն է պահպանել՝ tāčik (*taik/č - «վազել»): «1. Միջագետքի արաբ, 2. Արաբական, 3. Արաբավազ», պրս. tāzi, asb-e tāzi «արաբավազ ձի»: Այս բոլորի արմատն է իրանական tāč «վազել», պհլվ. taxtan, պրս. tāxtan «ասպատակել», որոնց այլ ցեղակիցներն են սնակրտ. tākti, ալբ. ndjek, ռուս. теку, тець «վազել, հոսել» և այլն⁸⁰:

Բառն արձանագրում է նաև Ղ. Ինճիճյանը. «Տաճիկ նժոյգ, այսինքն՝ արաբ-ընթաց երվար. մանաւանդ յԱրաբիս, զի Արապ է երազ: Անունս Տաճկաստան ըստ խորենացւոյն է մի ՚ի գաւառացն Արաբիոյ. վասն որոյ և ասելն Տաճիկ ձի է ասել Զի արաբացի»⁸¹: Բառամիավորն արձանագրում է նաև Գ. Ջահուկյանը⁸²: «Տաճիկ ձին» հիշատակվում է նաև «Բազմավեպում». «Զհաստատած տաճիկ ձին այսպէս ճանաչէ. յառաջ պարտ է մեզ զգլխոյն նշաններն գրել և ապա զայսն ...»⁸³:

Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում» (Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր) հանդիպում է նաև տաճկաձի բառաձևը՝ «1. Արաբավազ ձի, 2. Արաբական ձի, 3. Այդպիսի ձիեր հեծնողներ» իմաստներով⁸⁴: Նշենք նաև, որ հայերենում «արաբավազ ձի» իմաստն են արտահայտում նաև քաջաձի⁸⁵, սրաձի⁸⁶, օղազնաց⁸⁷ եզրերը:

ԻԼԽԱ/ԻԼԽԻ/ԻԼՂԻ

Իլխա⁸⁸ բառը Ղարաբաղի բարբառում նշանակում է «1. խառնիճաղանջ՝ խառն բազմություն՝ ամբոխ: Իլխան վէր կամ ա, փիս մարթիք շատ ըն ընում, հօրը չըրչարում ըն: 2. Նախիր, հոտ»: Պլտահում ըն մին վըխճարու

⁷⁷ Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան. 1885, 124:

⁷⁸ Գիրք վաստակոց. 1877, 198, 203:

⁷⁹ Ղ ա գ ա ռ յ ա ն, Ա վ ե տ ի ս յ ա ն. 2009, 744:

⁸⁰ Ա ճ ա ռ յ ա ն. 1979, հ. Դ, 365:

⁸¹ Ի ն ճ ի ճ ե ա ն. 1835, I, 200:

⁸² Ջ ա հ ու կ յ ա ն. 2010, 253:

⁸³ «Բազմավեպ» (Վենետիկ), 1867, 358:

⁸⁴ Հ ո վ հ ա ն ի ս յ ա ն. 2010, 271:

⁸⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի. 1836–1837, II, 985, Ղ ա գ ա ռ ե ա ն. 2000, II, 625:

⁸⁶ Ղ ա գ ա ռ յ ա ն, Ա վ ե տ ի ս յ ա ն. 2009, 719:

⁸⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի. 1836–1837, II, 1022, Ղ ա գ ա ռ ե ա ն. 2000, II, 648:

⁸⁸ Ս ա ռ գ ս յ ա ն. 2013, 224:

իլխու: Եզրը Ղարաբաղի բարբառում կազմում է իլխա անել «հավաքել» դարձ-վածքը: Էդ խօսման սաղ ապրրանքը իլխա յա անում, քըչո՞ւմ ո՞ւրանց շենը⁸⁹: Բառամիավորն արձանագրում է նաև «Հայոց լեզվի բարբառային բառարանը»։ Իլխա՝ Արարատյան, Ղարաբաղի, իլխի՝ Արարատյան, Ղարաբաղի, Կարինի, Համշենի, Մշո, Մոկսի բարբառում և այլն, իլղի՝ Մշո բարբառում «երամակ, ջոկ» իմաստով: Արաբատանու իլխիներիցն էլ լիներ, էլի ոտները ջուր կիջներն⁹⁰:

Պարսկերենում Ilxi (ايلخي) բառը թյուրքական փոխառություն է . «1. Ձիերի երամակ, 2. Չորքոտանի կենդանիներ, որոնց ազատ բաց են թողնում դաշտում արածելու»⁹¹, նույնն է նաև yelxi⁹²: Եզրը հանդիպում է նաև Դեմավենդի բարբառում, որտեղ elxi է կոչվում «պետությունը պատկանող ձիերի երամակը»⁹³:

Բառը թուրքերենում վկայված է yilki «ձիերի երամակ» նշանակությամբ⁹⁴: Թուրքերենում նույնիմաստ են ilx/ilxe/ilxah/yilki ձևերը⁹⁵:

ժամանակակից թյուրքական լեզուներում jütkü եզրը նաև ունի. «1. Երամակ, 2. Երամակի ձի, 3. Չհեծած ձի, 4. Ձի, 5. Ջամբիկ, 6. Մատակ, 7. Ձի, որն ուղևորափոխադրման համար չի օգտագործվում» իմաստները: Ելներով նրանից, որ եզրը հին թյուրքական տեքստերում, բացի «ձի» կենդանու անվանումից, հակադրվում է մյուս բոլոր ընտանի կենդանիների անվանումներին, Ա. Շչերբակը կարծում է, որ այն առանձին առնչություն ունի հենց «ձի» բառի նշանակության հետ⁹⁶:

Պարսկերենում «ձիերի երամակի» իմաստով են հանդես գալիս նաև sile⁹⁷, fasile, fasila (-e)⁹⁸ արաբական փոխառությունները:

Հայերենում բառի իմաստային հոմանիշն է ուլուգ «ջոկ, երամակ» եզրը⁹⁹:

ԽԱԹԱՐ

Ղարաբաղի բարբառում խաթար¹⁰⁰ բառը նշանակում է «10–12 ձիերից կազմված խումբ՝ քարավան»: Ղըչըղնէն յըրա յըն պըրծընում էտ խաթարէն, թըլանում: Բառը նույնիմաստ կիրառություն ունի նաև Պարտիզակի բարբառում: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» բառի խառնիճահանջ, խառնիխուռն իմաստը վկայում է նաև Բուլանրիխի բարբառում¹⁰¹:

⁸⁹ Սարգսյան, Մինասյան. 2017, 187:

⁹⁰ Հայոց լեզվի բարբառային բառարան. 2002, հ. Բ, 167:

⁹¹ دهخدا. ۱۳۷۲/۱۹۹۳-۱۹۹۴, ج. ۳, ۳۲۰۴, ۳۲۰۳, معین. ۱۳۵۶/۱۹۷۷, ج. ۱, ۴۱۹, عمید. ۱۳۵۸/۱۹۷۹, ۲۶۹.

⁹² دهخدا. ۱۳۷۲/۱۹۹۳-۱۹۹۴, ج. ۱, ۲۱۰۹۰, ۴۱۹.

⁹³ علمدارى. ۱۳۸۴/۲۰۰۵, ۱۰۲.

⁹⁴ Баскакови другие. 1977, 927.

⁹⁵ Doerfer. 1963, 426.

⁹⁶ Щербак. 1961, 84.

⁹⁷ دهخدا. ۱۳۷۲/۱۹۹۳-۱۹۹۴, ج. ۸, ۱۲۲۰۱, معین. ۱۳۵۶/۱۹۷۷, ج. ۱, ۴۱۹.

⁹⁸ دهخدا. ۱۳۷۲/۱۹۹۳-۱۹۹۴, ج. ۱۰, ۱۵۱۳۵, معین. ۱۳۵۶/۱۹۷۷, ج. ۲, ۲۵۴۷.

⁹⁹ Աճառյան. 1977, հ. Գ, 593:

¹⁰⁰ Սարգսյան. 2013, 258:

¹⁰¹ Հայոց լեզվի բարբառային բառարան. 2002, հ. Բ, 263:

Քննվող բառամիավորի հետ կապված՝ նկատենք. պարսկերենում ընտանի կենդանիների անվանումներում բազմաթիվ են արաբերենից փոխառյալ «ուղտ» նշանակության բառերը: Ընտանի կենդանիների այդ խմաստային խմբում հանդիպում են նաև ուղտախմբերի անվանումներ, որոնց թիվը պարսկերենում հասնում է մոտավորապես մեկ տասնյակի¹⁰²: Հարկ է նշել, որ պարսկերենում արաբերենից փոխառյալ այդ անվանումների մեջ արձանագրված է xatr (خاطر) եզրը. «1. Ուղտերի խումբ, 2. Քառասուն, երկու հարյուր կամ հազար ուղտից բաղկացած խումբ» իմաստներով¹⁰³: Ամենայն հավանականությամբ, քննվող բարբառային եզրույթն այս բառից է, որը հայերենում հնչյունական և իմաստային մասնակի փոփոխության է ենթարկվել: Ենթադրելի է, որ բառամիավորը հայերենում հենց «ծիերի խումբ» նշանակությամբ պիտի ունենար՝ ի տարբերություն արաբերենի, որտեղ բազմաթիվ են ուղտերի անվանումները¹⁰⁴:

ՅԱԲՈՒ

«Ղարաբաղի բարբառի բառարանում» յաբու¹⁰⁵ բառը նշանակում է «նի-հար՝ քնձոտ ձի»: Ըստրան էլ մին յաբու վա ինո՞ւմ, տանում ա ծախէ, հրդէննի ըստակում ա: Բարբառում այն ունի նաև «ծույլ՝ դանդաղաշարժ կին» անարգական նշանակությունը: Էդ յաբուն մինչը՛վ մին կօրծ ա անում, օրը մըլծնում ա:

«Հայոց լեզվի բարբառային բառարանը» ևս արձանագրում է բառը. «1. Հասարակ բեռնակիր ձի, 2. Հյուժված՝ ուժից ընկած քոտոտ ձի»: Եզրը վկայված է նաև Արարատյան, Նոր Բայազետի, Թբիլիսիի, Ուրմիայի, Մշո բարբառներում¹⁰⁶:

